

## **ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**30.12.2020**

### **Ուժը կորցրած է ճանաչվել գրավատնային գործունեության լիցենզիա**

ԿԲ խորհրդի դեկտեմբերի 29-ի որոշումով ուժը կորցրած է ճանաչվել «ԹՐԱՍԹ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց 12 շենք, 60 շինություն և ՀՀ, ք. Երևան, Արցախի փողոց 57(մեծածավալ) հասցեներում գործող գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե 279 լիցենզիան (տրված՝ 18.12.2013թ.)՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, որ որոշումներն ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչև լիցենզիայի գործողության դադարեցումը կնքված վարկային և պահատվության պայմանագրերից բխող իրավունքների և պարտականությունների կատարման հետ:

«ԹՐԱՍԹ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ և ֆիզիկական անձանց միջև կնքված վարկային և պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը և մինչև պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները և գումարի օգտագործման հետ կապված այլ վճարները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց, ներառյալ՝ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական և արտակարգ ծախսերը հատուցելուց և գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:*

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

*հեռ/ֆաքս. (010) 56 37 61*

*էլ-փոստ. [mcba@cba.am](mailto:mcba@cba.am)*

*[www.cba.am](http://www.cba.am)*